Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
նոյեմբերի 9-ի N 323 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցի ճաշարանային մասնաշենքը վերանորոգելն է, ինչը դպրոցին հնարավորություն կընձեռի ընդգրկվելու ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային կազմակերպության (ՄԱԿ ՊՀԾ) «Դպրոցական սնունդ» ծրագրում: Այս ծրագրի շրջանակներում դպրոցի 1-4-րդ դասարանների 252 աշակերտին օրական մեկ անգամ կտրամադրվի կալորիապես հագեցված և առողջ սնունդ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապե-տության օրենքի 15-րդ հոդված):
3.	Բարեգործը	Հայ օգնության Ֆոնդ
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, քաղ. Երևան, 0010, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, քաղ. Ապարան, Մարշալ Բաղրամյան փող., 2-րդ նրբանցք Բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 28,837,548 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, «Ապարան քաղաքի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբը՝ 2018 թ. հոկտեմբերի 2 Ավարտը՝ 2019 թ. փետրվարի 25
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել դպրոցի ճաշարանային մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 28,837,548 դրամ: Աշխատանքների իրականացման ժամկետն է՝ 2018 թ. հոկտեմբերի 2 – 2019 թ. փետրվարի 25: Իրականացվելիք շինվերանորոգման աշխատանքների մանրամասն ծավալները ներկայացված են պայմանագրին կից հավելվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում՝ 28,837,548 դրամի չափով, պայմանագիր՝ կնքված 02.10.2018 թ. Հայ օգնության ֆոնդի (ՀՀ, քաղ. Երևան, 0010, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115) և «Պրիզմա-Վան» ՍՊԸ-ի (ՀՀ, Լոռու մարզ, գ. Դարբաս, 3-րդ փողոց, տ. 26, ՀՎՀՀ՝ 06938443) միջև:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցելու է ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերը համակարգող հանձնաժողովի, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի և Երևանի գրասենյակների, ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերը համակարգող հանձնաժողովի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ